ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Ռազմարդյունաբերության կոմիտեի կարիքների համար հեռախոսային կապի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2023/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«21» դեկտեմբերի 2022թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Բաթոյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի նախագահի օգնական

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Խաչատրյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող

Տիգրան Հակոբյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության համակարգչային ցանցի ադմինիստրատոր

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2023/03» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 19.12.2022թ. ժամը 10:00-ն,

1.2 էլեկտրոնային հակադարձ աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 20.12.2022 թ., ժամը 10:00-ին:

1.3 հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված.

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ նաև Օրենք/ 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	Հեռախոսային ծառայություն	1 000 000

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

N	Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
1	**«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ**	ք.Աբովյան, Խաղաղության 1,
2	**«ՔրոսսՆեթ» ՍՊԸ**	ք. Երևան, Կորյունի 7, գր. 3,

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերը՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրակատության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6. «ԲՏԱՆ-ԷԱՃԾՁԲ-2023/03» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	**«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ**	**800000**	**20%**	**960000**	**585000**	**20%**	**702000**	
2	**«ՔրոսսՆեթ» ՍՊԸ**	**816667**	**20%**	**980000.4**	**719000**	**20%**	**862800**	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 20.12.2022թ.-ին, և Համակարգի կողմից առաջին տեղն զբաղեցրած մասնակից է համարվել **«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ**-ն

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարության Հավելված 1 և իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.2 կամ 1.3/ առկայության մասին.

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը /դիմում-հայտարարության Հավելված 1, իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.2/

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա պահանջվող փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ ընտրված մասնակցի վերաբերյալ.

- Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը ***որոշեց* «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-*ին հայտարարել ընտրված մասնակից,***

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովը որոշեց գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել համապատասխան պայմանագիր

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ Կարեն Բաթոյան

Անդամներ՝ Տիգրան Խաչատրյան

Տիգրան Հակոբյան

Քարտուղար՝ Օֆելյա Ասատրյան